

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Տեսականորեն հնարավոր է ենթադրել, որ մի լեզու կարող էր գոյատևել անկախ ու առանձին և չազդվել այլ լեզուներից: Այդ լեզվի միջոցով հնարավոր կդառնար պարզել լեզվի զարգացման բնական անխառն ընթացքը: Սակայն այդպիսի իդեալական լեզու գոյություն չունի: Լեզուն հասարակական իրողություն է, և հանրության տարբեր խմբեր անընդհատ շփվում են իրար հետ, հաղորդակցվում, և դա իր ազդեցությունն է ունենում լեզվի վրա: Ժողովուրդներն իրար հետ առնչվում են տարբեր հարաբերություններով: Նրանք կարող են բնակվել հարևանությամբ, մի ժողովուրդը կարող է հպատակ լինել մյուսին և այլն: Այս ամենի հետևանքով լեզուները շփվում են ու փոփոխվում: Տարբեր ազգությունների մարդիկ հաղորդակցվում են, և, բնականաբար, մեկը յուրացնում է մյուսի լեզուն՝ հիմք ունենալով իրենք: Տարբեր ժողովուրդներ իրարից ընդօրինակում են զանազան սովորույթներ ու ծեսեր, երևույթներ ու առարկաներ, և հաճախ փոխառվում են նաև այդ իրողություններն անվանող բառերը: Նոր իրողությունը կամ պիտի անվանվի տվյալ լեզվում եղած կամ լեզվի միջոցներով կազմված նոր բառով, կամ այլ լեզվից փոխառված բառերով: Ահա այս ճանապարհով էլ լեզվում գործածվում ու արմատավորվում են փոխառությունները: Ընդ որում փոխառությունները մի լեզվից կարող են անցնել բոլորովին ուրիշ կառուցվածք ու յուրահատկություններ ունեցող լեզվի, որն այլ լեզվաընտանիքի է պատկանում:

Դրակա՞ն երևույթ է օտար լեզվի ազդեցությունը, թե՞ բացասական: Առաջին հայացքից թվում է, թե պետք է այն բացասական համարել, քանի որ խաթարվում է ազդվող լեզուն, սակայն այս հարցը միակողմանի չէ: Պետք է չմոռանալ, որ մի լեզվի ազդեցությունը հարստացնում է մյուսին, նաև ինչ՝որ չափով նպաստում նրա զարգացմանը. դրա ամենավառ ապացույցն են բառապաշարի փոխառությունները: Նշենք, որ օտար ազդեցությունները սովորաբար բացասական են համարվում որևէ ժամանակաշրջանում, իսկ հետո ազդեցության տարբեր դրսևորումներից շատերը կարող են այնպես արմատանալ լեզվում, որ բացարձակ չգիտակցվի դրանց օտար լինելը:

Լեզուների ազդեցության մասին խոսում է, օրինակ, աշխարհաբարի քերականության հեղինակ Արսեն Այրենյանը: Նա գտնում է, որ «Լեզուի մը մէջ օտարութիւն քանի մը տեսակ է. 1. օտար բառ, 2. օտար ծել (ածանց, բարդ, հոլով), 3. օտար նշանակություն, եւ 4. օտար ոճ կամ դարձուած»¹: Անդրադառնալով այս հարցին Հր. Աճառյանը նշում է, որ օտար ազդեցությունները պետք է որ արտահայտվեն հետևյալ ձևերով՝ փոխառյալ բառեր, ոճեր ու դարձվածքներ, քերականություն և շարադասություն, մասնիկներ, հնչյուններ²:

Այս հարցը պետք է քննել համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդներով: Տարաժամանակյա մոտեցմամբ՝ օտար ազդեցությունները դրսևորվում են Հր. Աճառյանի նշած ձևով, այսինքն՝ ծագումնաբանորեն նույնիսկ հնչյուն-

ներ են անցել մի լեզվից մյուսին: Սակայն համաժամանակյա հայեցակետով քննելիս պարզ է դառնում, որ հիմնական ազդեցությունները բառապաշարային են ու շարահյուսական, մասամբ էլ ուղղախոսական: Եթե փորձենք դասակարգել ժամանակակից հայերենի վրա օտար լեզուների ազդեցությունները և առանձնացնել այն միավորները, որոնք փոփոխվում են այդ ազդեցությունից կամ իրենց գոյությամբ փոփոխվում են լեզուն, ապա կարող ենք առանձնացնել հետևյալը՝ *հնչյունների արտասանություն, օտար բառեր, բառակազմական պատճենումներ, իմաստային պատճենումներ, շարահյուսական կառույցներ*:

Անդրադառնալով սրանց առանձին-առանձին:

Հնչյունների արտասանությունը օտար ազդեցությունների հետևանքով փոփոխվում է հատկապես այն բառերում, որոնք նոր փոխառություններ են, գիտակցվում է դրանց փոխառյալ լինելը, և դրանք գործածվում են նաև առնչակից այլ լեզուներում: Ժամանակակից խոսակցական հայերենի վրա հատկապես մեծ է ռուսերենի, վերջին տարիներին նաև անգլերենի ազդեցությունը: Այդ ազդեցության հետևանքով խոսակցական լեզվում խաթարվում է փոխառյալ շատ բառերի արտասանությունը, օրինակ՝ *դիկտատոր* – *դիկտատր*, *Սոսկվա* – *Սասկվա* և այլն: Հաճախ տեղի է ունենում նաև որոշ հնչյունների քմայնացում՝ *դիկտատոր* – *ծիկտատր*: Օտար լեզուներից առվող բառերի հնչյունական կազմի վրա ազդում է նաև այն, թե որ լեզվից է անցնում այդ բառը: Դրա հետևանքով կարող են առաջանալ զուգահեռ ձևեր, ինչպես՝ *տեստ* – *թեսթ*, *Վիլյամ* – *Ուիլյամ*: Այսպիսի բառերի մի մասը այս կամ այն տարբերակով արդեն արմատացել է, իսկ մյուսները դեռ գոյատևում են երկու ձևով, մինչև որևէ մեկը դուրս մղվի գործածությունից: Սովորաբար նման խնդիրները լուծվում են լեզվական որոշումների միջոցով:

Օտար ազդեցությունների ամենամակերեսային ուսումնասիրությունից էլ պարզ է դառնում, որ լեզվան դեր ունեն և մեծ թիվ են կազմում փոխառյալ բառերը: Չկա այնպիսի լեզու, որը չունենա փոխառյալ բառեր: Հր. Աճառյանը փոխառությունները բաժանում է երկու խմբի՝ զրական և ժողովրդական: Գրական համարում է այն փոխառությունները, որոնք մի լեզվից մյուսին անցնում են գրքերի միջոցով և սովորաբար ունենում են սահմանափակ կիրառություն: Օրինակ՝ հունարենը մեծապես ազդել է գիտական, հատկապես բժշկական տերմինների ստեղծման վրա, լատիներենը՝ քիմիայի, բուսաբանության և այլն:

Ժողովրդական փոխառությունները անցնում են կենդանի լեզվի միջոցով և շատ ավելի կարևոր են, քան նախորդները: Սրանք ավելի լայն գործածություն ունեն և ավելի ցայտում են արտահայտում մի ժողովրդի ազդեցությունը մյուսի վրա: Ընդ որում ոչ միայն նվաճված ժողովուրդն է կրում տիրապետողի ազդեցությունը, այլև հակառակը: Ինչպես իր «Էրակատար քերականության» մեջ նշում է Հր. Աճառյանը², թուրքերը, տիրելով հույներին, բազմաթիվ բառեր վերցրին նրանցից: Նույնիսկ թուրքական պաշտոնությանը այդքան բնորոշ *էֆենդի* բառը հունական փոխառություն է: Հայերենից էլ որոշ բառեր անցել են թուրքերենին, ինչպես *փեթակ*, *խաչ*, *չափ*, *յուղ* և այլն:

Բառերը մի լեզվից մյուսին անցնում են նաև առևտրատնտեսական հարաբերությունների հետևանքով: Այդպիսի անցումների արդյունք են թերևս ամբողջ աշխարհին ծանոթ *թեյ* կամ *չայ*, *կոֆե*, *կակաո*, *վանիլ* և այլն: Բառերը կա-

որոշ են նաև խոհարարական կապերի միջոցով փոխառնվել: Այդպիսի բառերից են *բուֆետ*, *ռեստորան*, *կոտլետ*, *վինեգրետ*՝ և այլն, որոնք անցել են ֆրանսերենից: Մեր օրերում, երբ հեռուստատեսության ու համացանցի միջոցով ամբողջ աշխարհն օրական քսանչորս ժամ հաղորդակցվում է, և անընդհատ տեղի են ունենում տեխնիկայի նոր նվաճումներ, այդ գործընթացն ավելի է ակտիվացել: Լեզուն «չի հասցնում» նոր երևույթներն անվանելու համար ստեղծել նոր բառեր, ուստի փոխառություններն արագորեն ներթափանցում են ու լայնորեն գործածվում: Դրանք հետագայում կարող են փոխարինվել հայերեն համարժեքներով ու դառնալ օտարաբանություններ կամ էլ ամրապնդվել լեզվում՝ որպես փոխառություններ⁴: Այս գործընթացն այսօր ծավալուն դրսևորում ունի, և շատ են գործածվում օտար, հատկապես քաղաքական և տեխնիկական զանազան հասկացություններ արտահայտող բառեր: Դրանց համարժեքները, ինչպես նշվեց, այնքան էլ արագ չեն ստեղծվում, և դա նպաստում է օտար բառերի ամրապնդմանը, ուստի հայերեն համարժեք ունեցող և օտարաբանության վերածված բառերը հետագայում դժվարությամբ են «զիջում» իրենց դիրքերը: Եական դեր կարող է ունենալ նաև անհաջող համարժեքի ստեղծումը, նման դեպքերում ժողովուրդը շարունակում է գործածել օտար բառը, և ստեղծված համարժեքը չի դառնում համընդհանուր գործածական:

Քննելով փոխառությունների հարցը Հր. Աճառյանը նշում է, որ տարբեր խոսքի մասերի պատկանող բառերը տարբեր չափերով են փոխառվում: Ամենաշատ փոխառվող բառերը գոյականներն են, այնուհետև ածականները: Բայերից փոխառվում են միայն դերբայները, այն էլ միայն անորոշ դերբայի ձևով: Դերանունները և եական բայը չեն փոխառվում: Հազվադեպ են փոխառվում նաև նախադրությունները, մակբայները, շաղկապները, իսկ թվականներից փոխառվում են միայն մեծ թվերը, օրինակ *հազար*, *միլիոն*, *միլիարդ*: Փոքր թվերը հազվադեպ են փոխառվում և սահմանափակ գործածություն ունեն (օրինակ՝ նարդու խաղի ժամանակ)⁵:

Օտար լեզուների ազդեցությամբ են ստեղծվում նաև կառուցվածքային պատճենումները, ինչպեսին է, օրինակ, *համացանց* բառը, որը ստեղծվել է *ինտերնետ*—ի պատճենմամբ: Այս առիթով Աճառյանը մի ուշագրավ դիտարկում է անում: Խոսելով *երկաթուղի* բառի մասին՝ նա նշում է. «Անհրաժեշտ չէ կարծել, թե այս բոլորը թարգմանված են ֆրանսերենից, որովհետև ով էլ որ տեսներ այդ ճանապարհը, անպատճառ պիտի ասեր *երկաթե ծամբա*, ինչպես ասում է և մեր գյուղացին⁶»: Այնպես որ որոշ դեպքերում պատճենումների հստակ առանձնացումը բավական դժվար է:

Ժամանակակից հայերենում մեծաթիվ են նաև իմաստային պատճենումները, որոնք ևս օտար ազդեցությունների հետևանք են: Օրինակ *մկնիկ* բառի գործածությունը որպես համակարգչային սարքավորում օտար ազդեցության հետևանքով կատարված իմաստային պատճենում է:

Նշենք նաև, որ փոխառյալ բառերը միայն լեզվի հարստացման աղբյուր չեն: Դրանց ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն լեզվի բառապաշարի հատկանիշները պարզելու համար, այլև լեզվական (նաև ոչ լեզվական) ուրիշ իրողություններ մեկնաբանելիս: Ինչպես դիպուկ բնորոշում է Վ. Համբարձումյանը, «լեզվի բառապաշարն այն ոլորտն է, որում ամբարված և ծավալված է

այն կրող ժողովրդի պատմությունը»⁷։ Հր. Աճառյանը «Լիակատար քերականության» մեջ բնութագրում է սա հաստատող հետևյալ դեպքը։ Թուրքերեն *դոլմա* (լիցք, խնողակ) արտասանվող բառը, գրվում է *տոլմա*, որը նշանակում է, թե նախկինում այդպես է արտասանվել։ Ե՞րբ է կատարվել տ > դ անցումը։ Հայերենի բարբառներում այս բառը մեծ մասամբ *դոլմա* ձևն ունի, սակայն Արարատյան բարբառում արտասանվում է *տոլմա*։ Թուրքերը 1021 թվականին են մտել Հայաստան, հետևաբար նրանց լեզուն 12-րդ դարի սկզբներից կարող էր ազդած լինել հայերենի վրա։ Ուստի այդ ժամանակ բառը դեռևս արտասանվում էր տ-ով, և տ > դ հնչյունափոխությունը կատարվել է 12-րդ դարից հետո⁸։ Այլ կերպ ասած՝ փոխառյալ բառի միջոցով նաև հնարավոր է պարզել մեկ այլ լեզվի հնչյունափոխական առանձնահատկությունները։

Քերականական ձևերը որպես լեզվական կարգեր, երբեմն մի լեզվից մյուսին չեն անցնում։ Ինչքան էլ որ մի լեզուն մյուսի վրա ազդի, որքան էլ բառեր փոխառվեն, միևնույն է, քերականական կարգեր չեն փոխառվում։ Երբեմն լինում են անցումներ, սակայն դրանք անցնում են ոչ թե որպես քերականական կարգի արտահայտիչներ, այլ որպես արդեն քարացած քերականական ձևից կազմված բառ կամ բառակազմական մասնիկ։ Նույնիսկ գրաբարյան քերականական շատ մասնիկներ ժամանակակից հայերենին անցել են որպես բառակազմական, այլ ոչ թե քերականական ձևույթներ։

Սակայն եթե քերականական մասնիկները մի լեզվից մյուսին չեն անցնում, ապա շատ տարածված է քերականական ընդօրինակությունը։ Մի լեզուն, մյուսից ազդվելով, կարող է ստանալ քերականական կազմության այնպիսի ձևեր, որոնք բնորոշ են ազդող լեզվին։ Այդ դեպքում լեզուն սեփական միջոցներով կազմում է քերականական միևնույն ձևը։ Մի լեզվում մյուսի ազդեցությամբ կարող են կատարվել նաև շարադասական փոփոխություններ։

Այսպիսի ազդեցությունների հետևանքով մեծ թվով փոփոխություններ կատարվում են նաև այսօր։ Սրա հետևանքով ստեղծվում են հայերենին ոչ բնորոշ կառույցներ՝ իրենց այնպիսի անդամներով, որոնք շարահյուսական պաշտոնները հաճախ դժվար կամ անհնար է լինում բնորոշել։ Ինչպես գրում է Հր. Աճառյանը, «Նվաճված լեզուն ազդվում է մեծ չափերով տիրող լեզվի մտածողությունից. օրինակ՝ հայ. ասվում է *քնար հարկանել*, բայց նաև *փող հարկանել*, որ շատ անմիշտ է, քանի որ փողը զարնելու գործիք չէ, այլ փչելու. թարգմանված է իրանականից, ուր ունենք պրս. «փող գարկել»⁹»։ Օտար ազդեցության հետաքրքիր նմուշ է բերում Աճառյանը. *Տրամվայ նստեցի, գնացի. Թրամվայ հեծա, գացի. Թրամվայ առի, գացի*։ Առաջինը ասում են տեղացիները, երկրորդը՝ ներգաղթած հայերը, և այդ ձևը թուրքերենի ազդեցություն է, երրորդը՝ ֆրանսիայից ներգաղթածները, և դա ֆրանսերեն ազդեցություն է։ Ժամանակակից հայերենում էլ մեծ թիվ են կազմում ռուսերենի ազդեցությամբ գործածվող օտար կառույցները, որոնց գործածությունը մերժելի է¹⁰։ Շարահյուսական այդպիսի կառույցներ են՝ *իր մոտ է, կայանում է նրանում, կախված է դրանից, կապված է դրա հետ, հանդիպել մեկի հետ* և այլն։

Բնական է, որ այսպիսի կառույցները շարահյուսորեն վերլուծելիս խնդիրներ են ծագում։ Օրինակ, եթե բերված *իր մոտ է*–ն կառույցները հնարավոր է համարել բաղադրյալ ստորոգյալ, *կայանում է նրանում*–ի *նրանում*–ը *սահմա-*

նափակման խնդիր, (կախված է) դրանից—ը հիմունքի պարագա, կապված է դրա հետ, հանդիպել մեկի հետ սխալ կառույցների ընդգծված անդամները հանգման խնդիրներ, ապա մոտենալ այդ տեսանկյունից, հոգ տանել մաշկի մասին և նման կառույցները պարզապես անհնար է վերլուծել հայերենի շարահյուսական օրենքներով, քանի որ դրանք հայերեն չեն: Իհարկե պետք է խուսափել նման կապակցություններ գործածելուց՝ անկախ նրանից՝ դրանք հնարավոր է հայերենի շարահյուսական օրենքներով ինչ—որ կերպ մեկնաբանել, թե ոչ: Բայց այս ազդեցությունը դժբախտաբար զնալով մեծանում է: Սամուլը և հեռուստատեսությունը ողողված են այսպիսի կառույցներով: Դրանց ներթափանցումը էապես սաստկացնում են հատկապես ֆիլմերի ու գովազդների անհաջող թարգմանությունները, որոնց հետևանքով առաջանում են թե շարահյուսական, թե բառագործածության տարբեր սխալներ: Օրինակ *ի՛նչ անել վնասված մազերի հետ*, *արևածաղկի յուղ* (փխ. ձեթ), *սպիտակեղենին տալիս է թարմություն* և այլն:

Թեև ձևաբանական կարգերն ուղղակիորեն չեն անցնում մի լեզվից մյուսին, սակայն դրանք էլ կարող են մեծապես ազդել: Օրինակ՝ ռուսերենի որոշ անեզական գոյականների ազդեցությամբ գործածվում են *ակնոցներ*, *արծալուրդներ* և այլ հոգնակի գոյականներ, որոնք, սակայն, տվյալ դեպքում եզակի են և արտահայտում են մեկ առարկա կամ հասկացություն:

Եթե ընդհանրացնենք այս ամենը, ապա կարող ենք ասել, որ օտար ազդեցություններն անխուսափելի են. դրանք եղել են, կան և կլինեն: Առհասարակ օտար ազդեցությունները ունեն և՛ դրական դեր, և բացասական: Դրական դեր են խաղում անհրաժեշտ փոխառությունները, որոնք հարստացնում են լեզվի բառապաշարը, իսկ անհարկի փոխառությունները բացասական են: Վնասակար են հնչյունական և շարահյուսական ազդեցությունները: Սրանք մեծ մասամբ խաթարում են լեզուն և հազվադեպ են նպաստում վերջինիս զարգացմանը:

ՃԱՆՈՓԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Ա. Այտընեան, Բնական բերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 323:
- ² Դմմտ. Գր. Աճառյան, Լիակատար բերականություն հայոց լեզվի, Ներածություն, Եր., 1955, էջ 373:
- ³ Գր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 378:
- ⁴ Տես Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 154–155:
- ⁵ Գր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951, էջ 569–599:
- ⁶ Գր. Աճառյան, Լիակատար բերականություն հայոց լեզվի, Ներածություն, Եր., 1955, էջ 382:
- ⁷ Վ. Դամբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 1, Եր., 2006, էջ 4:
- ⁸ Գր. Աճառյան, Լիակատար բերականություն հայոց լեզվի, Ներածություն, Եր., 1955, էջ 380:
- ⁹ Գր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 383:
- ¹⁰ Տես Լ. Եզեկյան, նշվ. աշխ., 2003, էջ 157–158:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:
2. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Եր., 1955:
3. Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Եր., 1951:
4. Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987:
5. Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003:
6. Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Եր., 1989:
7. Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, հ. 1, Եր., 2006:
8. Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ. 1, 2, Եր., 1990, 1991:
9. Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982:
10. В. Виноградов, Проблемы русской стилистики, М., 1981.
11. Д. Розенталь, Практическая стилистика русского языка, М., 1974.

В. Мурадян

ПРОЯВЛЕНИЕ ВОЗДЕЙСТВИЯ ИНОСТРАННЫХ ЯЗЫКОВ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

В статье говорится о тех воздействиях иностранных языков, которые происходят в процессе развития языка. В общем плане представлены словесные и синтаксические изменения, которые под воздействием других языков происходят в современном армянском языке.

V. Muradyan

REVELATION OF FOREIGN INFLUENCES IN MODERN ARMENIAN

In the article is written about foreign influences that are made during the process of language development. There are presented changes in word and syntactical changes that happens in Modern Armenian under the influence of other languages.